ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 29 >> 05 2013 թվական N 48 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԱՌԻՃԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1 -րդ և 77^2 -րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանը.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գառնառիճի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Լիպարիտ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, խմբի ղեկավար,

Հուրիկ Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ,

Գագիկ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ,

Լյովա Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ,

Զորիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ,

Արմեն Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝

1) Գառնառիճի համայնքում վարչական հսկողություն իրականացնել 5 աշխատանքային օրվա ընթացքում, (ժամկետ՝ 2013 թվականի հունիսի 3-ից մինչև 2013 թվականի հունիսի 7-ը),

2) վարչական հսկողություն իրականացնել 2010 թվականի մայիսի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար,

3) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել արդյունքները և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է